

ՄԱՌԱՄԽՈՒՂԻ ՄԷՀ

(Լ. Անդրէնիկ)։

Այն օրը, դեռ լուսաբացից, փողոցներում կանգնած էր մի տարօրինակ անշարժ մառախուղ. նա թեթև ու թափանցիկ էր և չէր ծածկում առարկաները, բայց բոլորը, ինչ որ անցնում էր նրա միջից, ներկում էր վըրդովեցիչ մոլոք-դեղին գոյնով, և կանանց ալտերի թարմ կարմը ութիւնը, նրանց հագուստների վառ բծերը երեւում էին նրա մէջ որոշակի և մուժ, ինչպէս սև քօղի միջից։ Դէպի հարաւ, որտեղ ամպալին վարագոյրի լետե թագնուում էր աշնանալին ցած արեգակը, երկինքը պարզ էր, երկրից էլ պարզ։ իսկ դէպի հիւսիս՝ նա ցած էր իջնում լայն, հաւասարապէս սևին տուող վարագոյրի պէս և գետնի երեսին մօտ դառնում էր դեղնագոյն, մուժ և անթափանցիկ, որպէս գիշեր։ Նրա ծանր ֆօնի վերալ մուժ շինութիւնները երեսում էին բաց-մոխրագոյն։ իսկ աշունքից արդէն աւերջուած մի ալգու մուտ. քի մօտ եղած երկու սպիտակ սիւները նման էին ննջե. ցեալի մօտ դրուած երկու դեղին մոմի, Եւ այդ այգում ծաղկանոցներն էլ քանդուած ու կոխկրտուած էին կոպիտ ոտերից և կոտրուած ցողունների վերալ հանդարտ մարում էին մառախուղի մէջ վառ-հիւանդու և ուշ մնացած ծաղիկները։

Փողոցում եղած մարդիկը բոլորն էլ շտապում, բոլորն էլ մոալլ ու լուռ էին։ Տիսուր և սարսափելի անհանգիստ էր ալդ դեղին մառախուղի մէջ շնչասպառ եղող ցնորական օրը։

Սեղանատանը խփել էր արդէն 12 ժամը. մի քիչ լետոյ կարճ կերպով խփեց 12 և կէսը. իսկ Պաւել Շիբակօվի սենեակում մուժ էր. ինչպէս իրիկնադէմին և

ամէն բանի վերալ ընկած էր անդրադարձած սև-դեղ-նաւում շողքը: Փղոսկրի նման նրանից գեղին էին տես-րակները և սեղանի վրայ թափթիած թղթերը, և նրան-ցից մէկի վրայ եղած չվճռած հանրահաշուական խնդի-րը իր պարզ թուանշաններով և կախարդական տառե-րով նայում էր այնպէս հին, այնպէս բարձի թողի ա-րուած եւ անպէտք կերպով, կարծես թէ շատ տիսուր տարիներ էին անցել նրա վրայով: Դեղնին էր տալիս նրանից նաև մահճակալի վերալ պառկած Պաւելի երեսը: Մինչեւ արմունկները մերկ, ամուր և երիտասարդ ձեռ-քերը դրած էին գլխի յետելը: Բաց գիրքը կազմը դէպի վեր ընկած էր կրծքի վերալ և մութ աչքերը լառած էին ծեփաշէն և ներկուած տռաստաղին: Նրա ներքի խառնաշփոթ և մութ գոյների մէջ կար մի տեսակ տիսուր, ձանձրացնող և անճաշակ բան, որը լիշեցնում էր այն տասնեակ մարդկանց մասին, որոնք բնակուել էին ալս-տեղ Ծիբակովներից առաջ, քնել էին, խօսել, պարապել իրանց զանազան գործերով և բոլորի վերալ դրել իրանց օտար կնիքը: Եւ այդ մարդկակ լիշեցնում էին Պաւելին հարիւրաւոր ալ մարդկանց, ուսուցիչների և ընկերների աղմկալից և մարդշատ փողոցների մասին, որտեղով անց ու դարձ են անում կանալք. և այն բանի մասին, որը նրա համար ծանր ու սարսափելի էր, որի մասին կամենում էր մոռանալ և չմտածել:

— Ճիսուր է, տը՝ խոնք, ծոր տալով¹⁾ ասում էր Պաւելը, ծածկում աչքերը և այնպէս է ձգւում, որ կօ-շիկների ծալրերը կպչում են մահճակալի երկաթի ձո-ղերին: Խիտ յօնքերի ծալրերը ծոռեցին և ամբողջ ե-րեսը ցնցեց ցաւի և զզուանքի ծամածութիւնը տա-րօրինակ կերպով ալանդակելով և աղճատելով նրա դի-մագծերը: Երբ կնճիռները հարթուեցին, երևաց որ նրա երեսը երիտասարդ է և գեղեցիկ: Եւ առանձնապէս գե-ղեցիկ էին փափիկ շրթունքների համարձակ գծագրու-թիւնը և այն՝ որ ինչպէս երիտասարդ ընչացքներ չկալին և այդ նրանց դարձնում էր մաքուր և սիրելի, ինչպէս երիտասարդ օրիորդի շրթունքներ: Բայց աչքերը փա-

¹⁾ Ծոր տալ, երկարացնելով ասել. գաւառ. բառ:

կած պառկել և արտեանունքների մթութեան մէջ տեսնել այն բոլոր սարսափը, որն ուզում էր ընդմիշտ մոռացութեան տալ, աւելի ևս տանջող էր և Պաւելի աշքերը զօռով բացուեցան։ Նրանց մոլորուած փայլից նրա երեսի վերալ երեաց մի տեսակ պառաւտական և անհանգիստ բան։

— Խեղճ երիտասարդ եմ ես, խեղճ երիտասարդ։ բարձր ձայնով խղճաց ինքն իրան և աչքերը դարձրեց պատուհանին, ազահութեամբ լոյս որոնելով, բայց նա չկալ և դեղին խտարը յամառութեամբ սորում է լուսամուտներով, տարածում մենեակում և այնքան պարզ կերպով է զգացւում, որ կարծես թէ նրան կարելի է շօշափել մատներով։ Եւ նորից նրա աչքերի առաջ փոռեց բարձրում առաստաղը։ Առաստաղի քիւը ծեփած էր և ներկայացնում էր մի ոռւսական գիւղ։ անկիւնը դէպի առաջ կանգնած էր խրճիթը, որի նմանը իրտականութեան մէջ գոյութիւն չունի. նրա մօտ փետացել էր մի գիւղացի ոտը մի քիչ բարձրացրած և ձեռքի գաւազանն աւելի բարձր էր իրանից, ինքն էլ խրճիթից էր բարձր, մի քիչ աւելի հեռու թեքուել էր մի ցածլիկ եկեղեցի. իսկ նրա կողքին առաջ էր պրծել մի ահագին սալլակ, այնպիսի մի փոքրիկ ձիով, որ կարծես դա ոչ թէ ձի, այլ որսկան զուն է, գունչն էլ շան դնչի նման սուր։ Ցետու արդէն նոյն կարգով. խրճիթ, մեծ գիւղացի, եկեղեցի և ահագին սալլակ և արդպէս ամբողջ սենեակի շուրջը։ Եւ այդ բոլորը դեղին էր կեղտոտ վարդագոյն Փօնի վերալ, այլանդակ ու տիսուր, և այդ բոլորը լիշեցնում էր ոչ թէ գիւղ, այլ մի անձի տիսուր և բովանդակութիւնից զուրկ կեանքը։ Ատելի է այն վարպետը, որ ծեփել է այդ գիւղը, բայց չի տուել գիւղին և՝ ոչ մի ծառ։

— Գոնէ շուա նախաճաշէինք, շշնչաց Պաւելը, թէև նա բոլորովին չէր ցանկանում ուտել և անհամբեր կերպով շուա եկաւ կողքի վերալ։ Նարժուելու ժամանակ գիրքն ընկաւ յատակի վերալ և թերթը դարձաւ, բայց Պաւէլը ձեռքն էլ չմեկնեց նրան վերցնելու համար։ Դրքի սև մէջքի վերալ ոսկէ տառերով տպած էր. Բոկլ, քաղաքակը թութիւն պատմութիւն. և այդ

լիշեցնում էր մի հին բանի, անթիւ մարդկանց մասին, որոնք շատ վաղուց ցանկանում են կարգաւորել իրանց կեանքը և չեն կարողանում. լիշեցնում էր մի կեանքի որտեղ ամեն բան անհասկանալի է և կատարւում է անողորմ անհրաժեշտութիւնով. իրականացած ոճրագործութեան նման տխուր և ճնշող այն բանի մասին, որի համար Պաւելը շեր ուզում մտածել: Եւ լայն ու պարզ լրսի մի այնպիսի ցանկութիւն զգաց նա, որ մինչև անդամ աչքերն էլ ծակծկութեցին: Պաւելը վեր ժռաւ, անցաւ վալր ընկած գրքի վրայով և սկսեց քաշել լուսամուտների վարագուրները, աշխատելով որքան հսար է լայն բանալ:

— Ա՛խ, սատանալ, հալիոյում էր նա և շպրտում պաստառը, բայց ծանր լինելով, նա հանդարտ լեռ էր ընկնում ուղիղ և անտարբեր ծալքերով: Յանկարծ լոգնած և ամերոջ եռանդը կորցրած, Պաւելը ծոյլ կերպով մի կողմ քաշեց վարագուրը և նստեց լուսամուտի սառը գոգի վերայ: Մառախուղը կանգնած էր և երկինքը մոխրագոյն տանիքների եաւելից սև գեղնաւուն էր, և նրա ստուերն ընկնում էր տների և մալթերի վերայ: Մի շաբաթ առաջ եկել էր առաջին թեթև ձիւնը, հալուել էր և այդ ժամանակից մայթերը կպչող և մոխրագոյն ցեխով էին ծածկուած: Տեղ տեղ խոնաւ քարերը անդրադառնում էին սև երկինքը և փալլում էին թեք ու մութ ցոլքով: Եւ քարերի վրայով ցնցուելով ու օրօրուելով սահում էին կառքերը: Վերեւում թխկթը կոցը չէր լսում, նա հանգչում էր մառախուղի մէջ, անգօր էր երկրից վեր բարձրանալու, և այդ անաղմուկ շարժումը, մութ երկնքի տակ թրջուած տների մէջ տեղում, թւում էր աննպատակ և տխուր: Բայց ոտով և կառքով անցուղարձ անողների մէջ կալին և կտնայք և նրանց ներկայութիւնը այդ պատկերին խորհրդաւոր և լուզիչ նշանակութիւն էր տալիս: Կանալք գնում էին իրանց գործերի լետելից և կարծես բոլորովին սովորական և աննկատելի էին: Բայց Պաւելը տեսնում էր նրանց սարսափելի և օտարութի առանձնութիւնը, նրանք խորթ էին մնացած բոլոր ամբոխի համար և չէին ձուլում նրա մէջ, բայց կարծես կրակներ լինէլին մթու-

թեան մէջ։ Եւ բոլորը նրանց համար էր, փողոցները, տները, մարդիկ և ամէն բան դէպի նրանց էր ձգում և նրանց ծարաւում, և չէր հասկանում նրանց։ «Կին» խօսքը հրեղէն տառերով քանդակուած էր Պաւելի ուղղում։ Նա ամէնից առաջ այդ խօսքն էր տեսնում դրքի բաց երեսների վերայ, մարդիկ խօսում էին կամաց, բայց որ պատահում էր «կին» բառը նրանք կարծես բղաւելով էին արտասանում այդ բառը։ Եւ Պաւելի համար այդ էր ամենատանհասկանալի, ֆանտաստիքական ու սարսափելի խօսքը։ Սուր և կասկածոտ հայեացքով հետեւում էր կանանցից ամեն մէկին և այնպէս էր նայում, կարծես թէ ահա այս բոպէին կմօտենալ նա տանը և օդը կը ցնդեցնի նրան բոլոր մարդկանց հետ կամ մի որ և է աւելի սարսափելի բան կանէ։ Բայց երբ նրա հայեացքը ընկնում էր պատահաբար կանացի մի գեղեցիկ դէմքի, նա ամբողջովին ձգւում էր, գեղեցիկ և գրաւիչ դէմք էր ընդունում և աչքերով հրամայում էր, որ նա շուռ գալ, նայէ իր վերայ։ Բայց նա շուռ չէր գալիս և նորից սրտի մէջ տիրում էր դատարկութիւն, մուժ և սարսափ, որպէս ամայի տան մէջ, որի միջով անցել էր տիսուր ժանտախտը, կոտորել բոլոր կենդանի էակներին և տախտակներով փակել լուսամուտները։

— Տը... խուր... եմ... ծոր տալով ասաց Պաւելը և լետ քաշուեց փողոցից։ Հարևան սենեակում, սեղանատանը, վաղուց արդէն ման էին գալիս, խօսում և թխթխացնում ամանները։ Յետոյ ամեն ինչ լոեց և լսուեց տանտիրոջ, Պաւելի հօր, կոկորդալին բարի թաւ ձախնը։ Նրա ձայնի առաջին դիւրեկան ելեկցներից կարծես փչում էր անոլշ սիզարի, խելօք գրքի և մաքուր սպիտակեղէնի հոտ։ Բայց այժմ նրա մէջ կար մի տեսակ ճաքուած, ծրմռուած բան, կարծես կեղտոտ գեղանգոյն տիսուր մառախուղը Սերգէ Անդրեիչի կոկորդն էլ էր թափանցել։

— Իսկ մեր երիտասարդը դեռ ևս բարեհաճում է հանգստանամլ։

Մօր պատասխանը Պաւելը լսեց։

— Եւ դպրոցի ճաշու ժամերգութեանը չէ բարեհաճել գնալ։

Պատասխանը կրկին չի լսւում:

— Ե՞հ, ե հարկէ դա հին սովորութիւն է և... շարունակում է հայրը հեգնելով:

Նախադասութեան վերջաւորութիւնը Պաւելը չըլսեց, որովհետեւ Սէրգէլ Անդրէիչը շուռ եկաւ. բայց երեկի մի ծիծաղաշարժ բան ասաց և Լիլիան բարձրաձայն քըքջաց: Երբ Պաւելի հայրը նրա դէմ մի որ և է գաղտնի դժգոհութիւն էր ունենում, նա հայհոյում էր տղալին նրա համար, որ տօներին ուշ է վեր կենում, պատարագին ժամ չի գնում թէև կրօնի վերաբերմամբ ինքն էլ անտարբեր էր բոլորովին և կլինէր մօտ քսան տարի որ եկեղեցի չէր գնացել այն օրուանից, երբ ամուսնացել էր: Դեռ ամառուանից, երբ նրանք ապրում էին ամարանոցում, նա մի բան ունէր Պաւելի դէմ և կարծում էր թէ Պաւելը հասկանում է ալդ: Բայց ալժմ տիսուր կերպով վճռեց:

— Ե՞հ, բան չունիս...

Վերցնելով սեղանից տետրակը, Պաւելը ձեւացրեց թէ կարգում է, բայց աչքերը թշնամաբար և գողունի կերպով ուղղուած էին դէպի սեղանատունը, ինչպէս այն մարդու աչքերը, որ սովոր է թագնուել և սպասել յարձակուելու:

— Կանչեցէք Պաւելին, ասաց Սէրգէլ Անդրէիչը:
— Պաւել, Պաւլուշա, կանչեց մայրը:

Պաւելն արտգ վեր կացաւ և երեկի խիստ ցաւ զգաց. նա կուցաւ, դէմքը ծամածուեց սաստիկ ցաւից և նրա ձեռները ջղածգորէն փորին սեղմուեցին: Կամաց կամաց նա ուղղուեց, ատամները սեղմեց, որից բերանի անկիւնները երկարացան դէպի ծնոտը և գողդոջուն ձեռքերով ուղղեց վերնազգեստը: Ցետոյ դէմքը կուրի երեսի նման սպրզնեց և կորցրեց ամեն արտայալտութիւն և նա դուրս գնաց հաստատուն քալերով, բայց քալուածքի մէջ պահպանելով զգացած դաժան ցաւի հետքերը:

— Ի՞նչ էիր շինում, կտրուկ կերպով հարցրեց Սէրգէլ Անդրէիչը. առաւօտները բարեելը նրանց մէջ ընդունուած չէր:

— Կարդում էի, նոյնպէս կարճ կերպով պատաս-
խանեց Պաւելը:

— Ի՞նչ:

— Բոկլը:

— Հէնց է դա է, Բոկլը, ասաց սպառնալից ձեռվ
Սերգէլ Անդրեէլչը, պենսնէի տակից նայելով որդուն:
— Ի՞նչ է որ, վճռապէս և գրգռիչ կերպով պա-
տասխանեց Պաւելը և նայեց ուղիղ հօր տչքերի մէջ:
Նա մի քիչ լոեց և լետոյ խորհրդաւոր ձեռվ նկատեց.

— Ոչինչ:

Ալստեղ մէջ ընկաւ Լիլիչկան, խղճալով եղբօրը:

— Պաւելիկ, երեկոյեան տանը կլինես:

Պաւելը լուռ էր:

— Ով չի պատասխանում, երբ հարց են տալիս,
նա սովորաբար տնկիրթ է կոչում: Ի՞նչպէս է
Զեր կարծիքը այդ հարցի մասին, Պաւել Սերգէլչ, հար-
ցրեց հայրը:

— Դու էլ ախորժակ ունիս էլի, խառնուեց մար-
ըր, կեր, թէ չէ կողիկները կհովանան: Ինչ անտանելի
եղանակ է, այնքան մութն է, որ պէտք է ճրագ վա-
ռել, չգիտեմ ոնց եմ գնալու...

— Կլինեմ... պատասխանեց Պաւելը Լիլիչկին, իսկ
Սերգէլ Անդրեէլչը ուղղեց պէնսնէն և ասաց.

— Այդ մելամազգնոտութիւնը, այդ համաշխարհակին
վիշտը, ես չեմ կարողանում տանել... կանոնաւոր երե-
խան պէտք է աշխորժ և ուրախ լինի:

— Միշտ հօ չի կարելի ուրախ լինել, պատասխա-
նեց Լիլիչկան, որ միշտ ուրախ էր լինում:

— Ես չեմ պահանջում, որ մարդիկ ակամայ ուրա-
խանան... ինչո՞ւ չես ուտում, քեզ եմ հարցնում, Պաւել:

— Զեմ ուզում:

Ինչո՞ւ չես ուզում:

— Ախորժակ չկայ:

Իսկ երէկ երեկոյեան ուր էիր, թափառում էիր:

— Տանն էի:

Ոնց չէ, տանն էիր:

— Ուր կարող էի լինել, լանդքնաբար հարցըց

Պաւելը: Սերգէի Անդրէիչը պատասխանեց թունալից քաղաքավարութիւնով։

Որտեղ կարող եմ իմանալ ես այն բոլոր տեղերը — նա շեշտեց «տեղեր» բառը — ուր բարեհաճում է լինել Պաւել Սերգէիչը։ Պաւել Սերգէիչը չափահաս է։ Պաւել Սերգէիչի բեկները շուտով կաճեն, գուցէ և օղի է խմում, որտեղից ես կարող եմ իմանալ։

Նախաճաշը անցաւ լուս և այն ամենը, որի վրայ լուսամուտից լոյս էր ընկնում, թւում էր դեղին և տարօրինակ տիպուր Սերգէի Անդրէիչը ուշադիր և քննող հայեացքով նայեց Պաւելի երեսին և մտածեց. և աչքերի տակ շրջաններ կան... բայց միթէ ալդ ճիշտ է և նա մօտիկ է կանանց, ալդպիսի լակոտ։

Ալդ սարսափելի և տանջող հարցը, որի մտախն մինչև վերջը մտածելու համար Սերգէի Անդրէիչը ոյժ չունէր, երեան է եկել քիչ ժամանակ առաջ, ամառը, և նա պարզ լիշում է թէ ալդ ինչպէս եղաւ և երբէք չի մոռանալ։ Փոքրիկ մարագի լետեր, որտեղ խիտ կանաչ խոտ կար և ուր սպիտակ կեշին տարածում էր իր հով և կապոյտ ստուերը, նա պատահաբար տեսաւ մի պատռառուած և տրորուած թերթ թուղթ. ալդ թերթիկի մէջ մի առանձին և յուղող բան կար, ալդպէս պատառուում և տրորում են այն թղթերը, որոնք ատելութիւն և բարկութիւն են շարժում, և Սերգէի Անդրէիչը վերցրեց ալդ թուղթը, հարթեցրեց և նայեց։ Դա մի նկար էր։ Առաջ նա ոչինչ չհասկացաւ, ժպտաց և մտածեց. սա Պաւելի նկարն է, հիանալի է նկարում նա, լետոյ շրջեց թուղթը մի կողքի վրայ և պարզ որոշեց մի սարսափելի ցինիկ և կեղտոտ պատկեր։

— Այս ինչ զգուելի բան է. ասաց նա բարկացած և շպրտեց թուղթը։ Մի տասն քոպէից լետոյ նա որից դարձաւ, վերցրեց թուղթը և տարաւ իր առանձնասենեակը, երկար զննեց, աշխատելով վճռել կրծող և տանջող հանելուկը. արդեօք այս Պաւելն է նկարել, թէ մի ուրիշը։ Նա չէր կարողանում ենթադրել, որ ալդպիսի կեղտոտ և անարդ բանը Պաւելը կարող է նկարած լինել և նըկարելիս էլ իմանար այն բոլոր անառակ և զգուելի բաները, որ նրա մէջ կան։ Նկարած գծերի համարձակու-

թեան մէջ երկում էր փորձուած և անառակացած ձեռք,
որն առանց տատանուելու մօտեցել էր ամենագաղտնի
մտսերին, որոնց մասին չփշացած մարդն ամաչում է
մտածել անգամ։ Այն ջանասիրութեան մէջ, որով նկարն
ուղղուել է ռետինով և գունաւորուել կարմիր մա-
տիտով, կար անգիտակից և խոր անկման միամտութիւ-
նը։ Սերգէ Անդրեիչը նայում էր և չէր հաւատում,
որ նրա խելօք և զարգացած տղան, Պաւելը, որի բոլոր
մտքերն ինքը գիտէ, կարողանար իւր ձեռքով, ամուր
և մաքուր երիտասարդի արկեց սևացած ձեռքով, նկա-
րել ալդախիսի զգուելի բան և հասկանալ այն բոլորն,
ինչ որ ինքը նկարում է՝ Բայց որովհետեւ շատ սարսա-
փելի էր մտածել, որ այդ դրել է Պաւելը, ուստի որո-
շեց, որ այդ մի ուրիշ մարդ է նկարել, բայց թուղթը
թագցրեց։ Երբ տեսաւ Պաւելին հեծանիւից ցատկելիս,
ուրտիս, առողգ, դեռ ևս լի իր մանեկած դաշտերի
մաքուր հստով – նա մի անգամ էլ վճռեց, որ այդ Պա-
ւելը չէ արել և ուրախացաւ։

Բայց ուրախութիւնը շուտով անցաւ և կէս ժա-
մից յետոյ Սերգէ Անդրեիչը նայում էր Պաւելի վրայ և
մտածում։ ով է այս օտար և անծանօթ երիտասարդը,
տարօրինակ բարձր, տարօրինակ նման տղամարդու։ Նա
խօսում է կոշտ և առնական ձալնով, ուտում է շատ
և ագահ, հանգարտ ու անկախ կերպով գինի է ածում բա-
ժակը և կատակ է անում Լիլիալի հետ հովանաւորող
ձեռք, նա կոչւում է Պաւել, նրա երեսը Պաւելի երեսն
է, և ծիծաղն էլ Պաւելին է նսան, և երբ նա ալժմ
կրծեց հացի վերին չոր կեղևը, կրծեց Պաւելի նման,
բայց նա Պաւելը չէ։

— Քանի տարեկան ես, Պաւել, հարցրեց Սերգէ Անդրեիչը։ Պաւելը ծիծաղեց։

— Հալրիկ, ես արդէն ծեր եմ, շուտով կլրանալ 18-
տարիս։

— Եհ, դեռ մինչև 18-ը շատ ժամանակ կայ,
ուղղեց մայրը, դեռ դեկտեմբերի 6-ին միան կլինի 18-։

— Իսկ բեխեր դեռ չունիս, ասաց Լիլիան։ Եւ բո-
լորն սկսեցին զուարճանալ, որ Պաւելը բեխեր չունի,
իսկ նա ձեւացնում էր, իբր թէ լաց է լինում։ Իսկ ճա-

շից յետու նա շրթունքներից բամբակ կպցըեց և ասաց
ծերունու ձայնով:

— Իսկ ուր է իմ պառաւը:

Եւ ման էր գալիս թուլացածի նման: Եւ զեռ
ալդտեղ էլ Լիլիան նկատեց, որ Պաւելն ալսօր մի տե-
սակ շատ ուրախ է, որից յետու Պաւելը յօնքերը կիտեց,
պոկեց բեխերը և գնաց իր սենեակը: Եւ այդ ժամա-
նակուանից Սերգէլ Անդրեիչը որոնում էր իր նախկին
սերելի, լաւ ծանօթ երեխալին, հանդիպել էր մի նոր
և կախարդական բանի և տանջալից կերպով շուտարել էր:

Մի նոր բան էլ գտաւ նա այդ ժամանակ Պաւելի մէջ
տյն՝ որ որդին միշտ զանազան տրամադրութիւնների մէջ
է ընկնում, մի օր լինում է ուրախ և չարաճճի, կամ թէ
ամբողջ ժամերով մռալլում է, գրգռուած և անտանե-
լի է դառնում և թէև իրան զսպում է, բայց երեսում
է, որ տանջւում է ինչ որ անյալտ պատճառներից:
Նատ ծանր և անհաճելի է տեսնել, որ մօտիկ անձնա-
ւորութիւնդ տխուր է և չիմանալ պատճառը, և հենց
դրանից էլ մօտիկ մարդը հեռու և օտար է դառնում:
Հենց միայն այն բանից թէ՝ ինչպէս ներս մտաւ Պա-
ւելն, ինչպէս անախորժակ խմեց թէլը, փշրեց մատնե-
րով հացը, իսկ ինքը նայում էր այդ ժամանակ մի ալլ
կողմ, դէպի հարեւան անտառը-հալրն զգում էր նրա
վատ տրամադրութիւնն ու վրդովլում: Եւ նա ցանկա-
նում էր, որ Պաւելը նկատի այդ ու հասկանալ թէ
ինչպիսի անախորժութիւն է պատճառում նա հօրն իր
վատ տրամադրութիւնով, բայց Պաւելը չնկատեց և,
վերջացնելով թէլը, դուրս գնաց:

Ո՞ր ես գնում հարցըեց Սերգէլ Անդրեիչը:

— Անտառը:

— Էլի անտառը, բարկացած նկատեց հալրը:

— Պաւելը թեթև կերպով զարմացաւ:

— Ի՞նչ է որ. չէ որ ես ամեն օր անտառն եմ
գնում:

Հալրը լոելեայն շուռ էր գալիս, իսկ Պաւելը գուրս
էր գնում, և նրա լայն, հանդարտ երերուղ թիկունքից
երեսում էր, որ նա չմտածեց էլ թէ ինչո՞ւ է բարկանում
հալրը և բոլորովին մոռացաւ նրա գոյութեան մասին:

Եւ վաղուց էր որ Սերգէի Անդրեիչն ուզում էր վճռապէս և անկեղծ կերպով խօսել Պաւլի հետ, բայց սարսափելի տանջող էր այդ առաջիկայ խօսակցութիւնը և նա օրէցօր լետաձգում էր: Իսկ քաղաք տեղափոխուելուց լետոյ, Պաւելն առանձնապէս մռալլ և ջղալին դարձաւ, իսկ Սերգէի Անդրեիչը վախենում էր իրանից, որ չկարողանայ բաւական հանդարտ և ազգու կերպով խօսել: Բայց հենց այդ օրը, երկար և տխուր նախաճաշի ժամանակ, որսշեց խօսել: Կարող է պատահել, որ ուղղակի սիրահարուած լինի, ինչպէս սիրահարուած են լինում բոլոր այդ լակոտներն ու աղջիկները, հանգստացնում էր նա ինքն իրուն: Այ, Լիլկան էլ սիրահարուած է մի ինչ որ Աւդէկի վրայ, իսկ ես շեմ էլ լիշում թէ ով է նա, կարծեմ գիմնազիստ է:

Լիլիսա, Աւդէկն ալսօր լենելու է ալստեղ, հարցրեց Սերգէի Անդրեիչը ուժգին և շեշտած անտարբերութիւնով:

Լիլիան վախեցած ցնցեց երկար արտեանունքները, վայր ձգեց ձեռքից տանձն ու ցշնչաց:

—Այ...

Ցետոյ մտաւ սեղանի տակ, տանձը վերցնելու և երբ դուրս եկաւ ալդտեղից, ամբողջովին կարմրել էր, և մինչև անդամ ձայնն էլ կարծես կարմիր էր:

—Տինովը կլինի, Պասպելովը կլինի... և Աւդէկն էլ նոյնպէս կլինի:

Պաւելի սենեակում ալժմ առաջուանից մի քիչ լոյս էր և առաստաղի վրայի ծեփած գիւղն ալժմ աւելի պարզ էր երեսում և նայում էր մութ ու միամիտ ինքնարտականութիւնով: Պաւելը բարկացած զուռ եկաւ և գիրքը վերցրեց, բայց զուտով գրեց նրան իր կրծքի վրայ և սկսեց մտածել այն մասին թէ ինչ ասաւ Լիլիչկան: Գիմնազիստկաները գալու են: Այդ նշանակում է, որ գալու է Կատեա Ռէմերը - միշտ լուրջ, միշտ մտախոհ, միշտ անկեղծ Կատեա Ռէմերը: Այդ միշտքը նման էր կրակի, որի վրայ ընկաւ նրա սիրտը և հեծկլտալով նա արագ շուռ եկաւ և երեսը բարձի մէջ կոխեց: Ցետոյ նոյնպէս արտգ ընդունելով նախկին դրութիւնը, քամեց աչքերից երկու կամիլ աղի արցունք և յառուեց ա-

ռաստաղի վրայ, բայց էլ չէր տեսնում ոչ մեծ գիւղացուն մեծ փալտով, և ոչ ահագին սալլը, նա լիշեց ամարա-նոցը և յուիսեան մութ գիշերը:

Խաւար էր այդ գիշերը և աստղերը դողդողում էին երկնքի կապոյտ անհունութեան մէջ. և ներքեւց հանգցնում էր նոցա հորիզօնի տակից բարձրացող սև ամ-պը: Եւ անտառում, ուր պառկած էր Պաւելը, թուփերի ետեւ, այնպէս խաւար էր, որ նա չէր նշմարում նոյն իսկ իր ձեռքը և յաճախ նրան թւում էր թէ՝ նա ինքն էլ գոյութիւն չունի այնտեղ, և կայ միայն լուռ ու խուլ մթութիւն: Եւ հեռու՝ ամէն կողմ տարածւում էր մութ ու անվերջ աշխարհը և Պաւելը միայնակ և տիսուր սրտով զգում էր այդ անհուն ու օտար ահեղութիւնը: Նա պառկել ու սպասում էր թէ երբ նեղ շաւղովը կվերադառնալ Կատեա Ռէմերը Լիլիչկայի և միւս ուրախ ու անհոգ մարդկանց հետ, որոնք ապրում են այդ նրա համար խորթ աշխարհում և որոնք խորթ են Պաւելին: Պաւելը չգնաց նրանց հետ, որովհետեւ նա սիրում է Կատեա Ռէմերին մաքուր, գեղեցիկ ու տիսուր սիրով և Կատեան չգիտէ այդ և չի կարող մասնակցել այդ սիրոյն: Եւ նա ցանկանում էր լինել մենակ ու հեռու Կատեաից, որպէսզի աւելի խօսր զգայ նրա հեռաւոր գեղեցիւթիւնը և իր ցաւի ու միայնութեան խորութիւնը: Եւ նա պառկած էր թվերի մէջ, գետնի վրայ, խորթ բոլոր մարդկանց և օտար կեանքի համար, որն իր բոլոր գեղեցկութիւնով, երգերով և ուրախութիւնով անցնում էր նրա մօտից, անցնում էր այդ յուղսեան մութ գիշերին:

Նա երկար պառկեց և խաւարն աւելի թանձրա-նում ու մթանում էր, երբ առաջնեցից հեռուում լսուեցին ձայներ, ծիծաղ, ճիւղերի ճայթուն ոտքերի տակ և պարզուեց, որ գալիս է շատ ուրախ ու երիտասարդ մի հասարակութիւնն: Եւ այդ բոլորն առաջ էր շարժւում խուռն ուրախ աղմուկներով և բոլորովին մօտեցաւ ի-րան:

Ախ, Աստուած իմ, ասում էր Կատեա Ռէմերը— թանձր ու հնչիւն կօնտրալտօլով, այստեղ կարելի է գլուխ կոտրել մթութիւնից: Տենով, լուսաւորեցէք:

Մթութեան միջից ծվվաց տարօրինակ և ծիծաղելի մի կիսլանջի ձայն:

— Լուցկիս կորցրել եմ, Կատերինա Եդուարդովնա:

Ծիծաղի միջից լսուեց մի ուրիշ ձայն, երիտասարդ և զսպած թաւ: Թոյլ տուէք, Կատերինա Եդուարդովնա, ես կլուսաւորեմ:

Կատեա Ռէյմերը պատասխանեց և նրա ձայնը լուրջ ու փոխուած էր:

Խնդրեմ, Նիկոլայ Պետրովիչ:

Լուցկին փայլեց և մի վայրկեան վառուեց պայծառ սպիտակ լուսով բաժանելով խաւարից միմիայն իրան բռնող ձեռքը, որը կարծես օղում լինէր կախուած: Ցետոյ աւելի ևս մթնեց, և բոլորն էլ ծիծաղելով ու կատակելով առաջ շարժուեցին:

Տուէք ձեր ձեռքը, Կատերինա Եդուարդովնա. Հնչեց նոյն երիտասարդ և զսպուած թաւ ձայնը: Բոպէական լուութիւն էր, մինչև Կատեա Ռէյմերը կտար իր ձեռքը և նորից լսուեցին տղամարդու հաստատ քայլեր և նրա կողքին հագուստի համեստ խշխշոց:

Եւ նոյն ձայնը կամաց և քնքշաբար հարցրեց.

Խնչու ալդպէս տխուը էք, Կատերինա Եդուարդովնա:

Պատասխանը Պաւելը չլսեց. գնացողները դարձան դէպի նա թիկունքով, ձայները յանկարծ աւելի խլացան, նորից բռնկուեցին մարող խարուկի բոցի նման: Եւ երբ թուաց թէ ալլ ևս ոչինչ չկալ բացի խուլ խաւարից և լուութիւնից, անսպասելի պարզութեամբ հնչեց կանացի ծիծաղը և բարձր տենօրը երգեց լայն ու բաց:

Ազատ լուսաւոր և սիրալիբ:

Ցնծում է իմ հոգին:

Կեցցէ Մարիա Պետրովնան:

Եւ... ձեռքերը... և... ոտքերը:

Նրա բառը հնչեց բարձր և ուրախ, և ծանը խաւարը կարծես հնչեց գնացողներին: Տիրեց մեռելալին լուութիւն և ամալութիւն, որպէս երկրից հազար վերստ բարձր եղած դատարկ տարածութեան մէջ: Կեանքն անցաւ նրա մօտից բոլոր ուրախութիւններով, երգերով

և գեղեցկութիւնով, անցաւ կեանքը լուլիսեան ալդ
մուլթ գիշերին:

Պաւելը բարձրացաւ թփերի ետեից և շշնջաց:

Ինչու ալդքան տխուր էք, կատերինա Եղուար-
դովնա, և մեղմ արցունքները լցուեցին նորա աչքերը.

Ինչու ալդքան տխուր էք, կատերինա Եղուարդով-
նա, կրկնեց նա և աննպատակ առաջ անցաւ գիշերուա-
խուր խաւարի մէջ:

Մի անգամ նա դիպաւ ծառին և զարմանալով կանգ
առաւ: Յետոյ գրկեց անհարթ բունը, ընկերոջ պէս
կպցրեց երեսը և սառց մեղմ լուսահատութեան մէջ,
որին չէ արուած ոչ արցունք և ոչ կատաղի ճիչ: Յետոյ
կամաց յետ քաշուեց իրան ապաստանող ծառից և շա-
րունակեց առաջ գնալ:

Ինչու գուք ալդքան տխուր էք, կատերինա Եղուար-
դովնա, կրկնում էր նա, որպէս մի սրտաճմլիկ երգ,
որպէս լուսահատութեան մեղմ աղօթք, և նրա ամբողջ
հոգին ալէկոծւում և արտասւում էր ալդ ձայների մէջ:
Ահեղ աղջամուղջը պատում էր նրան և լի մեծ սիրով
նա աղօթում էր մի լուսաւոր բանի համար, որին ինքն
էլ չէր ճանաչում, դրա համար էլ նրա աղօթքն ալ-
քան ջերմ էր:

Անտառն այլ ևս հանգիստ ու լուռ չէր. հողմի
շունչն ալէկոծում է օդը և զապուած կերպով ճաթ-
ճաթեցին կատարները և չոր ժպտի պէս անցաւ տե-
րևների վրալից քամին: Եւ երբ Պաւելը հասաւ անտա-
ռի ծալը, քամին քիչ մնաց թուցնէր նրա գլխար-
կը և հուժկու կերպով փչեց նրա երեսին ցուրտը, թար-
մութիւնը և հաճարի հոտը:

Վեհ և ահռելի էր բնութիւնը: Ետեից սև խուլ
և հառաչող զանգուածի պէս բարձրանում էր անտառը,
իսկ առջեցից խաւարի նման ծանը ու սև զանազան ձե-
ւեր ընդունելով, շարժում էին ամպերը: Եւ նրա ներ-
քեում փոռւած էր հաճարի դաշտը, որը բոլորովին
սպիտակ էր. և որովհետեւ նա մթութեան մէջ սպիտակ
էր, քանի որ ոչ մի տեղից լոյս չէր ընկնում, ուստի
ծնւում էր մի տեսակ անըմբռնելի միստիքական եր-
կեւդ, իսկ երբ բոցավառում էր կայծակը և ամպերը

Նկարւում էին բարակ ու ալէկոծուած ահագին ստուեր-ներով, դաշտի մի ծայրից մինչև միւսը տարածւում էր լայն ոսկէփալլ ու կարմիր կրակը և հասկերը կորա-գլուխ վազում էին, որպէս վախեցած հօտ-վազում էին այդ լուլիսեան մուժ գիշերին:

Պաւելը բարձրացաւ հողապատնէշի վրայ, տարա-ծեց ձեռքերը և կարծես թէ դէպի իւր կուրծքն էր կոչում և' քամին և' մուժ տմպը և' ամբողջ երկինքը, որ ալնքան գեղեցիկ էր իր հրեղէն բարկութեան ժա-մանակ: Եւ քամին շոյում էր նրա երեսը, կարծես թէ շոշափում էր նրան, և սուլելով ներս էր խցկում դիւ-րաթեք տերևների խորքը, իսկ ամպերը բռնկում էին ու որոտում և հասկերը վախենում էին ցած խոնար-հուելով: — Դէ, եկ, եկ, բղաւում էր Պաւելը, իսկ քա-մին թուցնելով այդ խօսքերը կտաղի կերպով ներս էր խցկում նրանց կրկին նրա կոկորդը. և ամպերի որո-տումի մէջ չէին լոււմ այդ աղմկալոյզ և աղօթալից խօսքերը, որոնցով փոքրիկ մարդք դիմում էր մեծ ան-լայտութեանը:

Այս պատահել է ամառը, լուլիսեան մուժ գիշե-րին:

Պաւելը նայեց առաստաղին, ժպտաց գորովալից և հպարտ ժպիտով և աչքերում արտօսուք երևաց: Շնչպէս լալկան եմ դառել ես, շշնջաց նա և գլուխը շարժելով և միտմտաբար, երեխալի նման մատներով սրբեց աչքերը: Ցուսադրուած նա շուռ եկաւ դէպի պա-տուհանները, բայց ալնտեղից նալում էր քաղաքի տիսուր և մուլլ կեղտոտ մառախուղը և դրանից ամեն ինչ գեղ-նել էին, առաստաղը, պատերն ու տրորուած բարձր: Եւ դրանից վախեցած անցեալի մաքուր մտապատկեր-ները ալեկոծուեցին, սպրդնեցին և թափուեցան մի ինչ օր մուժ հորի մէջ, երերուելով և հեծկլտալով:

Ինչու գուք արդպէս տխուր էք, հարցըց Պաւե-լը, նրա հարցը նման էր իրան խնայելու համար ա-րուած երդման, բայց այդ աղաչանքն անզօր էր նոր, դեռ ևս աղօտ, բայց արդէն լաւ ծանօթ և սարսափե լի մտապատկերների առաջ. ինչպէս հոտած մառախու-ղը նեխուած ճահճի վրալից, սրանք էլ ալնպէս էին

բարձրանում ալիք սև հորից, և արթնացած լիշողութիւնը տիրապէս նոր ու նոր մտապատկերներ էր պերարտադրում:

— Զեմ ուզում, չեմ ուզում, զզնջում էր Պաւելը, թաւալգլոր գալիս ու կծկում ցաւից:

Նորից տեսաւ նա ամարանոցը, բայց ալժմ ցերեկ է, տարօրինակ, վատ և սարսափելի: Շոգ էր և արևը վուսաւորում էր, և որևէ տեղից ալրուած բանի վըր դովեցուցիչ հոտ էր փշում, իսկ նա թագնւում էր մօտիկ թփերի մէջ և ամբողջ մարմնով դողալով նայում էր հեռադիտակով թէ ինչպէս են կանալք լողանում. Ա նա տեսաւ նրանց մտրմնի վրայի մութ վարդագոյն քծերը. կապուտ երկինքը նրան կարմիր էր թւում և տեսաւ իրան սպրդնած գողդողացող ձեռքերով և հողի մէջ կեղտոտուած ծնկներով: Յետոյ տեսաւ քարեալ քաղաքը և նորից տեսաւ անտարբեր, լոգնտծ, անպատկառ և սառն աչքերով կանանց: Նրանց դալկացած և ներկած երեսների շարքը գնում հասնում էր անցեալի խորքը. և նրանց մէջ փալլուն էին բեխաւոր տղամարդկանց դէմքեր, գարեջրի շիշեր, կիսախում բաժակներ, մի տեսակ ածխահոտի մէջ լուսաւոլուած ստուերներ պարելով զրջան էին կազմում և անսրդաբար հնչում էր դաշնամուրը, գուրս վիժելով պօլկալի տխուր և ձանձրալի ձախներ:

Զեմ ուզում, մեղմ բայց արդէն անձնատուր լինելով շշնջաց Պաւելը: Իսկ լիշողութիւնները խրւում էին նրա հոգու մէջ, ինչպէս սուր գանակը կենդանի մսի մէջ և բոլորը կանալք էին. Նրանց հոգուց զուրկ մարմինը, զգուելի որպէս տան յետի բակերի կպչող ցեխը և տարօրինակ կախարդիչ իրանց չծածկուող կեղտի և մատչելիութեան մէջ և նրանք էին ամեն տեղ. Նրանք կալին և ցինիքական խօսակցութիւնների մէջ, որոնք կրծող ու մաշող են որպէս արջասպը, և՝ անմիտ անեկ գոտների մէջ, որ նա լսել էր ուրիշներից և ինքը վարպետօրէն պատմել էր ուրիշներին, նրանք կալին և այն նկարների մէջ, որ ինքը նկարում և ծիծաղելով ցոլց էր տալիս ընկերներին, նրանք կալին և միայնակ

մտածած մտքերի և երազների մէջ, որոնք որպէս մղաւանից ծանր ու ձգողական էին:

Եւ որպէս կենդանի, որպէս այն՝ որը երբէք մոռանալ չի կարելի, կանգնեց նրա առաջ գիշերը, ածխահոտով լի գիշերը: Հենց ալդ միևնոյն գիշերը, երկու տարի առաջ, նա տուեց իր մաքուր մարմինն ու իր առաջին մաքուր համբոյրներն անտառակ և անամօթ կնոջը. նրան կոչում էին Լուիզա, նա հազնուած էր հուսարական տարազով և անդադար գանգատում էր թէ ազդրները կոտրտում եմ:

Պաւելը համարեա չի լիշում թէ ինչպէս ինքը եղել է նրա հետ, բայց լաւ լիշում է միայն իւր տունը, ուր նա դարձել էր ուշ, լուսաբացից քիչ առաջ: Տունը մութ էր և լուս, սեղանատանը նրա համար պատրաստուած էր ընթրիք և հաստ կողիկը ծածկուել էր սառած ճարպի սպիտակ շերտով: Նրա սիրտը խառնում էր գարեջըից և տանջում նրան և երբ նա պառկեց, ծեփաշէն առաստաղը աղօտ լուսաւորուած մոմից օրօրուեց, զուռ եկաւ և կորաւ աչքերից: Նա մի քանի անգամ դուրս գնաց, տատանուելով, աշխատելով աղմուկ չբարձրացնել, կալելով աթոռներին և յատակն տնսովոր բոքիկ ոտների տակ սաստիկ ցուրտ ու սահուն էր. և ալդ անսովոր ցրտից աւելի պարզում էր, որ վաղուց արգէն գիշեր է և բոլորը հանգիստ քնած են, իսկ միայն նա է մանգալիս ու տանջում ցաւից, որն օտար էր ալդ մաքուր և լաւ տան համար:

Պաւելն ատելութիւնով աչքի անցրեց իր սենեակն և ատելի ծեփաշէն առաստաղն և հնազանդուելով հեղեղուած լիշողութիւններին, անձնատուր եղաւ նրանց սարսափելի տիրապետութեան: Նա լիշեց գեղեցիկ և ինքնավստահ Պետրովին, որ բոլորովին հանգիստ կերպով և առանց կրքի խօսում էր ծախու կանանց մասին և սովորցնում էր ընկերներին թէ ես երբէք ինձ թոյլ չեմ տալ համբուրել ծախու կանանց: Համբուրել կարելի է միայն նրան, որին սիրում և յարգում ես ոչ ալդ անպէտք արարածներին:

—Իսկ եթէ նա քեզ համբուրում է, հարցրեց Պաւելը:

—Թող անի.... Ես շուռ կգամ:

Պաւելը դառը ժպտաց, նա չէր կարող վարուել այն-
պէս, ինչպէս Պետրովը. և համբուրում էր տիգ կանանց,
նրա շրթունքները դիպչում էին նրանց սառած մարմնին,
և մի անգամ, սարսափելի է լիշել, նա տարօրինակ կոչ
անելով ինքն իրան համբուրեց ալդ թորշոմած ձեռքը,
որից վիշում էր անուշահոտ իւղերի և գարեջրի հոտ, նա
համբուրում էր այնպէս, որ կարծես մահուան պատ-
ժի էր ենթարկում ինքն իրան, նա համբուրում էր՝
կարծելով թէ նրա շրթունքները կարող են հրաշք
գործել և ալդ ծախու կնոջը դարձնել մաքուր և գեղե-
ցիկ, արժանի ամենամեծ սիրու, որի ծարաւով ալրուում
էր նրա սիրտը. իսկ նա ասել էր.

— Ինչ տեսակ քծնող էք դուք, զարմանալի քծնող:

Եւ ալդ կնոջից նա հիւանդացաւ. Հիւանդացաւ
ամօթարեր և կեղտոտ հիւանդութիւնով, որի մասին
մարդիկ խօսում են ծածուկ, հեգնական շշուկով, ծած-
կուելով փակ դռների լետեր, հիւանդութիւն, որի մա-
սին չի կարելի մտածել առանց սարսափի և զզուանքի
դէպի իւր անձը:

Պաւելը վեր թռաւ անկողնից և մօտեցաւ սեղանին:
Ալնտեղ նա տերափոխում էր գրքերը, տետրակները,
քաց էր անում նրանց, նորից փակում և նրա ձեռքերը
դողում էին: Իսկ աչքերը թեք, լարուած նայում էին
սեղանի ալն տեղին, ուր փակած ու վերևից էլ խնամ-
քով թղթով փաթաթած էին բժշկուելու պարագաները:

Եթէ ես ատրճանակ ունենայի, ալս ըոպէիս ինձ
գնդակահար կանէի: Ա՛յ. հէնց ալստեղ... մտածեց նա
և մատը դրեց ձախ կոխքին, ալնտեղ ուր խփում էր
սիրտը:

Եւ կենդրոնացած առաջ նայելով, մտածելով թէ
ընկերներից որի մօտ կարելի է զէնք գտնել, նա հա-
սաւ տրորուած անկողնին և պառկեց: Յետոյ նա մտած-
մունքի մէջ ընկաւ, թէ կարող է արդեօք նա ուղիղ
սրտին խիմել և բաց անելով վերնազգեստը ու շապեկը
սկսեց հետաքրքիր կերպով զննել մատաղ և դեռ ևս
չամրապնդուած կուրծքը:

—Պաւել, բաց արա, լսեց նա դռան ետևից Լիլիչկալի ձայնը:

Վախեցած ցնցուելով —ինչպէս նա վախենում է այժմ ամէն մի անսպասելի ձալնից ու աղմուկից —Պաւելն արագ կարգի բերաւ իրան և ակամալից բացեց դռան փակը:

—Ի՞նչ ես ուզում, մուլլուած հարցրեց նա:

—Ոչինչ, ուզում եմ համբուրել քեզ: Ի՞նչու դու միշտ փակում ես սենեակումդ, վախենում ես, որ քեզ կգողանան:

Եւ նա համբուրեց նրա ալտը կարմրած ականջի մօտ:

—Չեռք սի տալ ինձ... Հեռացիր... և ուսերը շարժելով կամաց աւելացրեց ես կեղտոտ եմ...

Լիլիչկան ծիծաղեց և ականջի ետևը խտուտ տալով ասաց.

—Դու մաքուր ես, Պաւլիկ ջան, լիշում ես թէ ինչպէս մենք երկսով միասին վաննայում լողանում էն ինք: Դու խոճկորի պէս սպիտակ էիր, այնպէս մաքուր, մաքուր...

—Հեռացիր, Լիլիչկա, խնդրում եմ, ի սէր Աստուծոյ...

—Չեմ հեռանալ, մինչև դու չու ըախանաս: Ականջիդ մօտ փոքրիկ պղուկ էտը, ես նոր տեսալ, թող համբումեմ:

—Հեռացիր, Լիլիա, ինձ մի դիպչիլ, քեզ եմ ասում, խուլ ձայնով ասաց Պաւելը, երեսը բարձի մէջ թագանելով: Ես կեղտոտ եմ, կեղտոտ...

Ծանր արտասանեց նա ալդ տանջող բառը և ամբողջովին ոտից գլուխ ցնցուեց ըոպէապէս պայմող և խուլ ու զսպուած հեծկլտանքից:

—Ի՞նչ պատահեց քեզ Պաւլիկ ջան, հոգիս, վախեցաւ Լիլիչկան:

Ուզում ես կանչեմ հալրիկին:

Պաւելը խուլ բայց հանգիստ կերպով պատասխանեց. չէ, հարկաւոր չէ, ոչինչ չկալ, գլուխս մի քիչ ցաւում է:

Լիլիչկան անվստահ և քնքոյշ կերպով շոյում էր

եղբօր խուզած և կոր ծոծրակը ու մտախոհ նալում վրան. յետոյ ասաց անտարբեր ձեռվ:

— Իսկ երէկ քո մասին Կատեա Շէյմերը հարցրեց:

Մի քիչ լսելուց յետոյ. Պաւելը առանց շուռ գալու հարցրեց.

— Ի՞նչ հարցրեց:

Հենց այնպէս, ընդհանրապէս. Բնչպէս ես ապրում, Բնչ ես շինում, Բնչու երբէք նբանց մօտ չես գնում, չէ որ նրանք քեզ հրաւիրել են:

Նա շատ պէտքն է...

Զէ, Պաւելի ջան, մի ասիլ, դու նրան չես ճանաչում.—

Նա շատ խելացի և զարգացած է և քեզանով հետաքրքրում է: Դու կարծում ես թէ նա միայն պարերն է սիրում, իսկ նա շատ է կարգում և ընթերցասէրների շրջան է ուզում կազմել. նա միշտ կրկնում է ինձ. Բնչ խելօք է քո եղբայրը:

— Նա կոտրտող է... և անպիտան:

Լիլիչկան բորբոքուեց, հրեց Պաւելին և վեր կացաւ.

Դու ինքդ ես անպիտանը, եթէ այդպէս ես ասում:

— Անպիտան, այո՛, դրանից ինչ, գրգոիչ ձեռվ ասաց Պաւելը չար ու փալլող աչքերով նալելով քըոջ վրայ:

Այն, որ չհամարձակուես ալդպէս խօսել, չհամարձակուես, բղաւեց Լիլիչկան, բոլորովին կարմրած և նոյնպէս չար ու փալլող աչքերով:

— Ախր չէ որ ես անպիտան եմ, պնդում էր Պաւելը:

Կոպիտ, անտանելի, բոլորի կեանքը թունաւորում ես... եսամոլու իսկ նա, քո ալդ Կատեան, անպիտան է. և դուք բոլորդ անպիտան, ցանցառ էք:

Լիլիչկայի աչքերում արտասուք փալլեց, բռնելով դրան փականքից, նա զսպեց ձայնի դողոցն ու ասաց.

Ես խղճում էի քեզ, դրա համար եկայ, իսկ դու արժանի չես դրան, այսուհետեւ էլ չեմ գալ քեզ մօտ, լսում ես, Պաւել:

Կոր ծոծրակն անշարժ մնաց: Լիլեան բարկացած գլխով արեց ու դուրս գնաց: Արտալալտելով դէմքի

վրալ բուռն արհամարհանք, կարծես դռնից դուրս գնաց
մի անմաքուր էակ, Պաւելը խնամքով գցեց փակիչը և
անց ու դարձ արաւ սենեակում: Նա իրան աւելի թե-
թեւ էր զգում, որ հայութեց Կատեալին էլ, Լիլիչկալին
էլ և ասաց որ նրանք բոլորն անպիտան ու ցանցառ
են: Եւ զգոյշ ման գալով սենեակում նա սկսեց մտա-
ծել այն մասին, թէ ինչպէս բըլոր կանալք վատ եսա-
կան ու սահմանափակ էակներ են:

Ա՛յ, օրինակ Լիլիան. նա չկարողացաւ հասկանալ,
որ եղբայրը գժեաղդ է և դրա համար էլ ալնպէս էր
խօսում և հայութեց ինչպէս չարչի կին: Նա սիրահա-
րուած է Աւդէսի վրան, իսկ նախանցեալ օրը նրա
մօտ էր Պետրովը, և նա հայութեց աղախնին, լետոյ
մօրը որ չեն կարողացել գտնել նրա կարմիր ժապաւէ-
նը: Եւ Կատեա Ռէմերն էլ ալդպէս է, նա մտախոհ է,
լուրջ է, հետաքրքրուում է նրանով, Պաւելով և ասում
է որ Պետրը խելօք է, իսկ եթէ գալ նրանց մօտ նոյն
Պետրովը նրա համար նա կկապի կապոյտ ժապաւէնը.
կսանրուի հայելու առաջ, և կգեղեցկացնի երեսը: Եւ
այդ բոլորը Պետրովի համար. իսկ Պետրովը մի ինքնա-
վստահ, դատարկապորտ և բութ մարդ է. դա ամբողջ
գիմնազիոնին լայտնի է: Կատեան մաքուր է և միայն
գլխի և ընկնում, բայց իրան թոյլ չի տալիս մտածել այն
մասին, որ գոյութիւն ունին անառակ կանալք և հի-
ւանդութիւններ, սարսափելի և խալտառակ հիւանդու-
թիւններ, որոնցից մարդ անբախտ ու զգուելի է դառ-
նում, և անձնասպանութիւն է գործում դեռ երիտա-
սարդ ու լաւ, իսկ ինքն այս ամառ հագնում էր կուրծ-
քը բաց զգեստ և երբ ման էր գալիս թեանցուկ, ալն
ժամանակ բոլորովին կպչում էր, կարող է պատահել որ
նա արդէն համբուրուել է մէկի հետ... Պաւելը սեղմեց
բուռնցքներն ու առամների միջից շշնչաց.

Ո՞րպիսի նողկանք:

Հաւանական է որ համբուրուել է. Պաւելը նրա վրայ
նայել անգամ չի համարձակուում, իսկ նա համբուրուել
է և երևի Պետրովի հետ. նա ինքնավստահ և լիրը է:
Իսկ լետոյ երբեմից նա կտալ Պետրովին և իր մարմի-
նը և նրա հետ կվարուեն նոյնպէս, ինչպէս ծախու-

կանանց հետ։ Ի՞նչ զգուելի բան, ի՞նչպիսի ստոր կեանք, որի մէջ ոչ մի լուսաւոր բան չկալ, որին կարողանար դիմել տխրութիւնից ու վշտից, մթագնած հայեացքը։ Ո՞վ գիտէ, կարող է պատահել, որ հէնց այժմ Կառեան ունի... սիրեկան։

Ե՛հ, չի կարող լինել, բղաւեց Պաւելը։ Իսկ մի ուրիշը նրա ներսից հանդարտ և չարախնդաց կերպով շարունակեց և նրա խօսքերը սարսափելի էին։

Այո, կայ մի որևէ կառապան կամ սպասաւոր։ Կան յալտնի դէպքեր, երբ այդպիսի մաքուր աղջկներն ունեցել են սիրեկան սպասաւորներ և ոչ ոք չի իմացել ալդ և համարել են նրանց մաքուր։ Իսկ նրանք գիշերը վազում էին տեսակցութեան, բորիկ ոտներով, սառը յատակի վրայ։ Յետոյ մարդու էին գնում և խաբում։ Այդ պատահում է։ ինքը կարդացել է։ Շէլմերները ունին մի սպասաւոր, ու և գեղեցիկ տղայ։

Պաւելը յանկարծ շուռ է գալիս ու սկսում դէպի հակառակ կողմը քալլել։

Կում Պետրովը... դուրս է եկել նրա մօտ տեսակցութեան, իսկ Պետրովընա լիրը է ու համարձակ, ասում է նրան, այսուեղ ցուրտ է։ գնանք մի որև է ասք տեղ։ Եւ նա գնացել է։

Իրանիզ յետոյ Պաւելը մտածել չի կարողանում, նա կանգնած է լուսամուտի մօտ և կարծես թէ ճըզմւում է գեղին ու անտանելի մառախուղից, որը տըխուր ու տիրաբար ներս է սողում սենեակը որպէս անձև գեղնափոր մի սողուն։ Զարութիւնն ու յուսահատութիւնը խեղտում են Պաւելին, բայց և այնպէս, նա իրան աւելի թեթև է զգում, որ մենակ ինքը չէ փչացած, այլ բոլորը, ամբողջ աշխարհը և նրա հիւանդութիւնը այնքան սարսափելի ոռ ամօթալի չի թւում։ Այդ ոչինչ, մտածում է նա, Պետրովը երկու անգամ է հիւանդ եղել, Սամոլլովը մինչև իսկ երեք անգամ, Շմիթը, Պօմերանցերը արդէն բժշկուել են, ես էլ կըքժշկուեմ։

Կլինեմ այնպէս, ինչպէս նրանք են, և ամեն բան լաւ կլինի, վճռեց նա։

Պաւելը փորձեց դրան փակը, մօտեցաւ սեղանին

և բռնեց գզրոցի կոթից, բայց ալստեղ նրա երևակայութետն առաջ եկան բոլոր այն խոր թաքցրած գործիքները, սրու ակները մութ հեղուկով, զզուելի և զեղին թղթէ նշաններով և այն ըսպէն՝ երբ ամօթից կարմրած, նա գնեց նրանց գեղատանը. իսկ գեղագործը երեսը միշտ շուռ էր տալիս նրանից կարծես թէ նա էլ էր ամաչում. և ինչպէս նա գնաց բժշկի մօա, որը բարեկիրթ և անսովոր մաքուր երեսով մի մարդ էր, ալնպէս որ տարօրինակ էր թւում որ ալդպիսի մաքուր մարդը ստիպուած է միշտ գործ ունենալ կեղտոտ և զզուելի հիւանդութիւնների հետ. և Պաւելի պարզած ձեռքը թուլացած ընկաւ և նա մտածեց.

Թող... ես չեմ բժշկուելու: Աւելի լաւ է որ ես մեռնեմ... նա պառկեց և նրա առաջ կանգնած էին զեղին նշաններով սրուակները և նրանցից հասկանալի զառան, որ այն բոլոր վատութիւնները որ մտածել էր կատեա Ռէյմերի մասին, կեղտոտ և ստոր սուտ էր, ինչպէս զզուելի ու կեղտոտ է և իր հիւանդութիւնը. Ամաչում, սարսափում էր նա, թէ ինչպէս կարողացաւ ալդպէս մտածել այն աղջկայ մասին, որին սիրում է և որի առաջ ծունկ չոքել անգամ նա արժանի չէ, թէ ինչպէս կարողացաւ մտածել և ուրախանալ իր կեղտոտ մտքերով և ալդ մտքերը ճիշտ համարել, և նրանց կեղտից քաղել էր տարօրինակ ու կեղտոտ հպարտութիւնը, և նա սարսափեց ինքն իրանից:

Թարգմ. Սարգ. Ման.

(Վերջը հետեւեալ համարում)